



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
RA MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
GAVAR STATE UNIVERSITY
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
ГАВАРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ԾՐԱԳԻՐ – ՀՐԱՎԵՐ
PROGRAM - INVITATION
ПРОГРАММА – ПРИГЛАШЕНИЕ

4-րդ (19-րդ) ԳԻՏԱԺՈՂՈՎ
4TH (19TH) SCIENTIFIC CONFERENCE
4-ая (19-ая) НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ

*Գիտաժողովը նվիրված է ԳՄՀ պատվավոր բարերար Ժիրայր
Նիշանյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին*

*The conference is dedicated to GSU honourable benefactor Jerair Nishanyan's
80th birthday anniversary*

*Научная конференция посвящена 80-летию со дня рождения почетного
благотворителя ГГУ Жирайра Нишаняна*

24 -25 դեկտեմբերի 2016թ.

ԳՍՍՈՒ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԲԱՐԵՐԱՐ ԺԻՐԱՅՐ ԹԱԳՎՈՐԻ (ԱԲՐԱՀԱՄԻ) ՆԻՇԱՆՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳՊՀ պատվավոր բարերար Ժիրայր Նիշանյանը ծնվել է Իրանի մայրաքաղաք Թեհրանում, 1936 թ. նոյեմբերի 29-ին: Ավարտել է Թեհրանի Ալբորզի ավագ դպրոցը: Չկարողանալով շարունակել ուսումը՝ նա երկու տարի շարունակ առավոտյան աշխատել է տեղի տարրական դպրոցում և դասավանդել մաթեմատիկա վեցերորդ դասարանցիներին, իսկ կեսօրից հետո աշխատել որպես հայ վաճառականի գրասենյակային օգնական շուկայում, և ինչպես 500 ԱՄՆ դոլարին համարժեք գումար:



Ժիրայր Նիշանյանի մանկության նվիրական երազանքն էր դառնալ քաղաքացիական ճարտարագետ և այն իրագործելու նպատակով նա որոշում է իր կրթությունը շարունակել Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Թեհրանի ամերիկյան գրադարանում ձեռք բերած գիտելիքներով նա ընդունելության համար դիմում է Միացյալ Նահանգների մի քանի համալսարաններ և ընդունվում Վաշինգտոնի Ամերիկյան համալսարան՝ անգլերեն լեզուն արտասահմանցի ուսանողների համար հատուկ ծրագրով, ինչպես նաև Վաշինգտոնում Ջորջ Վաշինգտոնի և Լինկոլնում Նեբրասկայի համալսարաններ՝ ճարտարագետի մասնագիտությամբ: Թեև Ժիրայր Նիշանյանի ավագ եղբայրը՝ Կարո Նիշանյանը, ցանկանում էր, որ նա գնա Եվրոպա և ստանա բժշկի մասնագիտություն, սակայն եղբոր՝ բուհ ընդունվելու մասին նամակները ստանալուց հետո, նա ինքնաթիռի տոմս է գնում եղբոր համար, և 1958 թ.-ի նոյեմբերի 8-ին Ժիրայր Նիշանյանը Թեհրանից մեկնում է Վաշինգտոն:

Ժամանելուն պես Ժիրայր Նիշանյանն անմիջապես գրանցվում է Ամերիկյան համալսարանում օտարերկրացի ուսանողների համար նախատեսված վեցշաբաթյա անգլերեն լեզվի դասընթացներին, սակայն այն ավարտելուց հետո, Վաշինգտոն նահանգի Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի վարձաչափի թանկ լինելու պատճառով, նա որոշում է տեղափոխվել Լինկոլն և գրանցվում Նեբրասկայի ճարտարագիտական համալսարանում: Ժիրայր Նիշանյանի 500 դոլարը շատ արագ է սպառվում, ուստի նրա համար կարևոր էր կես դրույքով աշխատանք գտնելը, որպեսզի կարողանա հոգալ իր ծախսերը: Ցավոք, 1958 թ.-ին Լինկոլնը մի փոքրիկ

համալսարանական քաղաք էր՝ շրջապատված մեծ ագարակներով, և օտարերկրյա ուսանողին աշխատանքային մեծ հնարավորություններ չէր առաջարկում: Այդուհանդերձ, մեկ կիսամյակ սովորելուց հետո, նա որոշում է վերադառնալ Վաշինգտոն, որտեղ կարող էր աշխատել և շարունակել ուսումը: Այսպիսով, Ժիրայր Նիշանյանը իր վաստակած կրեդիտներով ընդունվում է Հովարդի համալսարանի ճարտարագիտության բաժին, որտեղ կառավարության աջակցությամբ համալսարանում սահմանված էր ուսման ցածր վարձաչափ: Ուսմանը զուգահեռ նա կես դրույքով աշխատում է որպես մատուցողի օգնական՝ իր բնակավայրին մերձակա մի ռեստորանում:

1965թ.-ի հունվարի 22-ին Ժիրայր Նիշանյանին շնորհվում է քաղաքացիական ճարտարագետի բակալավրի աստիճան: Նա առաջընթաց է ունենում իր աշխատանքում և նշանակվում գլխավոր մատուցող Վաշինգտոնում գտնվող «Ինթերնեյշնլ» պանդոկ հյուրանոցում:

Քաղաքացիական ճարտարագետի բակալավրի աստիճան ստանալուց հետո, Ժիրայր Նիշանյանը որոշ ժամանակահատված աշխատում է ավտոմայրուղու շինարարության, օդային և տիեզերական արդյունաբերության ոլորտներում, ստանում ճարտարագետի (ինժեների) պաշտոն և աշխատանքի անցնում որպես ԱՄՆ կառավարության տրանսպորտի դեպարտամենտի ճանապարհների և կամուրջների նախագծման, ապա կառուցման հետազոտությունների ճարտարագետ (ինժեներ): Ճանապարհների կառուցման հետազոտությունների ինժեներ աշխատելուն զուգահեռ, Ժիրայր Նիշանյանը շարունակում է իր ուսումը և 1969թ.-ի հունիսին ստանում քաղաքացիական ճարտարագետի մագիստրոսի աստիճան, այնուհետև ասպիրանտուրայում հետազոտություն անցկացնում մետաղների դյուրաբեկության և կարծրության հատկությունների թեմայով և դառնում Դաշնային ավտոմայրուղու կառավարման հետազոտական գործունեության ծրագրի ղեկավար՝ կամրջաշինության ոլորտում պողպատի դյուրաբեկության և կարծրության հատկությունների գծով: Ձեռնարկելով այդ բոլոր պահանջարկ ունեցող աշխատանքները և մինչև ժամանակ ավելի մեծ հնարավորությունների ձգտելով՝ նա շարունակում է իր առաջընթացը:

Հետաքրքրված լինելով անշարժ գույքի զարգացմամբ և Դաշնային կառավարության համար աշխատելով լրիվ դրույքաչափով՝ Ժիրայր Նիշանյանը երեկոյան ժամերին և հանգստյան օրերին նույնպես արտաժամյա ներգրավվում է մասնավոր հատվածի առևտրային և բնակելի շրջանների նախագծման ու կառուցման գործընթացներում:

Նախքան համալսարանն ավարտելը, 1969 թ.-ի նոյեմբերին Ժիրայր Նիշանյանը հինգ հազար դոլար է ստանում իր մայրիկից՝ Մարիամ Նիշանյանից և իր մտերիմ ընկերոջ՝ Արա Պեգեշկյանի հետ համատեղ հիմնում «JAM» ձեռնարկությունը, ինչպես նաև Մերիլենդում, որը գտնվում է Քենսինգթոնում, ներդրում կատարում անշարժ գույքի՝ մի քանի հին բնակարանի ձեռքբերման նպատակով, որը ենթադրում էր, որ հետագայում առևտրային զարգացման ներուժ կունենա: «JAM» ձեռնարկության հիմնումը նրա առաջին ռիսկային քայլն էր, որը հաջողությամբ է պսակվում և շարունակվում մինչ օրս: Լիարժեք աշխատաժամանակով աշխատելուն զուգահեռ՝ Ժիրայր Նիշանյանը շարունակում է իր կես դրույքաչափով ձեռնարկատիրական գործունեությունը և «JAM»-ին զուգահեռ հիմնում «NGN», «JERAX» և «JADES» ձեռնարկությունները: 1988թ.-ի նոյեմբերին, Դաշնային կառավարությունում 22 տարվա ծառայությունից հետո, նա հրաժարվում է իր զբաղեցրած պաշտոնից և ամբողջապես նվիրվում սեփական ձեռնարկությունների զարգացման գործին:

Ժիրայր Նիշանյանը, որպես իր ձեռնարկությունների գլխավոր գործադիր տնօրեն, մշակել և կառուցել է առևտրի կենտրոններ, գրասենյակային շենքեր, առևտրային և բնակելի կառույցներ, որոնք ներառում են՝ առևտրային սեփականություն հանդիսացող հաստատություններ՝ “Merchant Tiers” on Chain Bridge Road “Tysons Corner” հասցեով, գրասենյակային կառույցը 1880 “HOWARD” AVE “Tysons Corner”, հասցեով, “JADES” առևտրային կենտրոնը Վիեննայում, “JADES” գրասենյակները Վիեննայում, “Grant Street Center”-ը Հերդոնում, “Manassas Park” առևտրային կենտրոնը, “Brentwood” Court Townhouses-ը Վիեննայում և “Akhtamar’s Haven” Subdivision-ը, որը բացառիկ բնակելի վայր է հանդիսանում Great Falls-ում:

Ժիրայր Նիշանյանը “Jer-Tag” ձեռնարկությունների, “Cycle Homes” ինկորպորացիայի և “Virginia” կորպորացիաների նախագահն ու հիմնադիրն է: “Jer-Tag” ձեռնարկություններին է պատկանում “Virginia” անշարժ գույքի բրոկերային գործունեության իրականացման լիցենզիան, իսկ “Cycle Homes” ինկորպորացիաներին՝ Ա դասի կապալառուների՝ գործունեության իրականացման լիցենզիան:

Ժիրայր Նիշանյանը, լինելով կենսաթոշակային տարիքի, այսօր ակտիվորեն ներգրավված չէ իր ընկերությունների և կորպորացիաների ամենօրյա ղեկավարման գործընթացում, սակայն որդին՝ Թագվոր Գ. Նիշանյանը որպես իր գործընկեր, կատարում է վարչական պարտականությունները, իսկ դուստրը՝ Ալինե Նիշանյան-Թեմփլինը գույքի կառավարման ոլորտի պատասխանատուն է:

Ժիրայր Նիշանյանի հայրը՝ Աբրահամ Նիշանյանը, ծնվել է Թուրքիայի Բուրսա քաղաքում, իսկ մայրը՝ Մարիամ Նիշանյանը, Ապին Ակուլիսում: Նրանք իրենց ընտանիքի անդամներից միակն էին, որ ողջ են մնացել Հայոց ցեղասպանության տարիներին: Ժիրայր Նիշանյանի հայրը ձեռնարկատեր էր և զբաղվում էր պարսկական գորգերի՝ ԱՄՆ արտահանման բիզնեսով: Նա հպարտանում էր իր հայկական ծագմամբ և իր ժողովրդի ավանդույթներով: Երբ Ժիրայր Նիշանյանի հայրը մահացավ, նա ընդամենը երկու տարեկան էր: Ժիրայր Նիշանյանը, լինելով հինգ երեխաներից կրտսերը, մայրական խանութի ներքո է մեծացել: Նրա մայրը մանուկ հասակում հրազենային վնասվածք է ստացել ծնկի հատվածում և հրաշքով վերապրել Հայոց ցեղասպանությունը: Նա հայտնվել է ամերիկացիների կողմից հիմնված Իրանի Համադան քաղաքի որբանոցում: Մարիամ Նիշանյանը շատ բարեպաշտ, իմաստուն և խելամիտ կին էր, ով իր հինգ զավակներին միայնակ է մեծացրել:

Բակալավրիատն ավարտելուց և ԱՄՆ-ում մշտական բնակություն ստանալուց հետո, Ժիրայր Նիշանյանը միջնորդում է Թեհրանում ԱՄՆ դեսպանատանը՝ իր կրտսեր քրոջը՝ Հասմիկին և մայրիկին՝ Մարիամին, մուտքի արտոնագիր տրամադրել և այն փոխել մշտական բնակության կարգավիճակով: 1967թ.-ի նոյեմբերին նա միջնորդում է իր ավագ քրոջ՝ Վարթին Զառուկյանի և նրա ընտանիքի համար, այնուհետև իր մյուս քրոջ՝ Ֆլորա Ղարախանյանի և եղբոր՝ Կարո Նիշանյանի և նրանց ընտանիքների համար, որպեսզի նրանց ներգաղթյալների մուտքի արտոնագիր տրամադրվի: 1970-ական թթ. կեսերին իր ողջ ընտանիքը տեղափոխվում է ԱՄՆ:

Ժիրայր Նիշանյանի վրա մեծ տպավորություն է թողել իր ծնողների անցյալը, և նրա հոգում խորը զգացմունքներ են առաջացել Հայաստանի՝ իր նախնիների հայրենիքի նկատմամբ: Նա մշտապես պարտքի զգացում և մեծ ցանկություն է ունեցել՝ օգնություն տրամադրելու մանկատներում գտնվող երեխաներին և օգտակար լինելու անապահով հայ երիտասարդներին, մասնավորապես, շնորհալի երիտասարդներին, որպեսզի նրանք կարողանան մասնագիտական կրթություն ստանալ և օգտագործել իրենց ներուժը: Իր տեսլականը իրականություն դարձնելու նպատակով նա 1993 թ.-ի նոյեմբերի 30-ին հիմնում է «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամը՝ “Jerair Nishanian Foundation” բարեգործական կազմակերպությունը: Այն գտնվում է “Virginia” ոչ առևտրային կազմակերպության իրավասության ներքո: “JNF”-ը ստեղծվել է բացառապես կրոնական, բարեգործական, գիտական, հասարակական, գրական և կրթական նպատակներով՝ համաձայն 1986թ.-ի ԱՄՆ-ի ներքին եկամտային օրենսգրքի 501C (3) բաժնի:

2002 թվականին Վաշինգտոնում Ժիրայր Նիշանյանը գործնական հանդիպում է ունեցել ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (այժմ՝ ՀՀ Սփյուռքի նախարար) Հրանուշ Հակոբյանի հետ, և այդ հանդիպումն առիթ հանդիսացավ հայրենիքում բարեգործական ծրագրերի մեկնարկի համար:

Հրանուշ Հակոբյանի հրավերով Ժիրայր և Անահիտ Նիշանյանները 2003 թվականի օգոստոսին այցելեցին մայր հայրենիք, եղան ՀՀ Գեղարքունիքի մարզում, ծանոթացան առկա սոցիալական խնդիրներին: Գավառի պետական համալսարանում ռեկտոր Հրանտ Հակոբյանի և ուսանողների հետ տեղի ունեցած հանդիպումից անմիջապես հետո նրանք որոշեցին ներդրումներ կատարել բուհական ոլորտում: Առաջին տարում պատրաստակամություն հայտնեցին ֆինանսավորելու սոցիալապես անապահով ընտանիքների 10 ուսանողների, իսկ հաջորդ տարիներին բազմապատկեցին օգնություն ստացող ուսանողների թիվը:

Այդ ժամանակից ի վեր Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղը և Գավառի պետական համալսարանը համատեղ են իրականացնում «Ժիրայր Նիշանյան հիմնադրամի կրթավճար» ծրագիրը:

2004 թ.-ին «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամը միջոցներ տրամադրեց և հիմնանորոգեց Գավառի պետական համալսարանի Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքը:

«Ժիրայր Նիշանյան հիմնադրամի կրթավճար» ծրագրում ընդգրկված բոլոր ուսանողները կրթավճարից բացի ստանում են նաև 7000 ՀՀ դրամ ամենամսյա կրթաթոշակ:

Հետագայում պարոն Նիշանյանը միջոցներ հատկացրեց նաև ԳՊՀ-ում համացանցային կապի ապահովման համար:

ԳՊՀ գիտակրթական զարգացման մեջ ունեցած իր ավանդի համար պարոն Ժիրայր Նիշանյանը 2006 թ. ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ արժանացել է ԳՊՀ Պատվավոր դոկտորի կոչմանը:

2008-2009 ուս տարվանից սկսած պարոն Ժիրայր Նիշանյանը ավելացրեց կրթավճարների քանակը և լրացուցիչ վճարեց նաև ԳՊՀ մագիստրատուրայում սովորող ուսանողների կրթավճարը:

Անցած տարիների ընթացքում «Ժիրայր Նիշանյան հիմնադրամի կրթավճար» ծրագրի շնորհիվ հարյուրավոր ուսանողներ տարբեր մասնագիտություններ են ստացել և հաջողությամբ աշխատում են տնտեսության տարբեր ոլորտներում՝ իրենց նպաստը բերելով մայր հայրենիքի շենացման գործին:

“JNF” կրթաթոշակային ծրագիրը Հայաստանում իրականացվում է Նյու Յորքում թեմական Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) և Երևանյան գրասենյակի կողմից:

2011 թվականի սեպտեմբերի 21-ին, երբ Ժիրայր Նիշանյանն ու նրա կինը՝ Անահիտ Նիշանյանը խորհրդի անդամների՝ արքեպիսկոպոս Վիգեն Այվազյանի, վերապատվելի երեց Վրթանես Քալաջյանի և երեցկին Անահիտ Քալաջյանի հետ միասին այցելեցին Գավառի պետական համալսարան, ֆակուլտետների ուսանողները Ժիրայր Նիշանյանին ու նրա կնոջը մեծ պատվով դիմավորեցին, և Ժիրայր Նիշանյանին ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ շնորհվեց ԳՊՀ-ի պատվավոր բարերարի կոչում:

«Ժիրայր Նիշանյան» հիմնադրամը 2015 թ.-ի մայիսին Վաշինգտոնում Հայոց ցեղասպանության հարյուրամյակին նվիրված միջառումների վեց խոշոր նվիրատուներից մեկն էր:

Հիմնադրամը նաև ֆինանսավորել է մի քանի առանձնահատուկ նախագծեր, որոնք են՝

1. Վաշինգտոնի Սուրբ Մարիամ հայ առաքելական եկեղեցու գլխավոր խորանի նախագծումը և կառուցումը,
2. Գավառի պետական համալսարանի մասնաշենքի վերանորոգումը,
3. Հովանավորել և ֆինանսավորել է հետևյալ գրքերի թարգմանությունն ու հրատարակումը.

ա) Դոկտոր Թաներ Աքչամի՝ «Երիտթուրքերի հանցագործությունը մարդկության դեմ. ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում» հեղինակային գրքի թարգմանությունը թուրքերենից հայերեն,

բ) Դոկտոր Թաներ Աքչամի հեղինակային գրքի թարգմանությունը արևելահայերեն,

գ) Անուշ Նաղգաշյանի՝ «Ես հայ եմ» մանկական գրքի տպագրությունը,

դ) «Հայերի պատմությունը Օսմանյան կայսրությունում» պատմության դասագրքի հրատարակումը, որի համահեղինակներ են հանդիսանում մի շարք հայ գիտնականներ: Այն նախատեսված է Հայաստանի բուհերի ուսանողների համար,

ե) «Երագներ և հրաշքներ» գրքի տպագրությունը և դրա բաժանումը Հայաստանի զինծառայողներին,

զ) «Գրականության ժամանակակից պատմություն» երկրորդ դասագրքի հրատարակումը, որն ամփոփում է թուրքական գրականությունը՝ ներառելով Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութեր,

է) Թաներ Աքչամի՝ «Հայերի բռնի իսլամացումը» հեղինակային գրքի թարգմանությունը թուրքերենից անգլերեն, ինչպես նաև թուրքերենից հայերեն:

«Ժիրայր Նիշանյան» հիմնադրամը ղեկավարվում է տնօրենների խորհրդի կողմից՝ հետևյալ կազմով.

Ժիրայր Նիշանյան՝ նախագահ

Անահիտ Նիշանյան՝ քարտուղար

Թագվոր Գ. Նիշանյան՝ փոխնախագահ /գանձապահ/

Անդամներ՝

Արքեպիսկոպոս Վիգեն Այկազյան

Վերապատվելի երեց Վրթանես Քալաջյան

Վազրիկ Ռիկ Նիշանյան

Երեցկին Անահիտ Քալաջյան

Ալինե Նիշանյան- Թեմփլին

Զավեն Քալաջյան

Ժիրայր Նիշանյանը Հայաստանի Հանրապետության Նախագահի, Վեհափառի, բուհերի և տարբեր կազմակերպությունների կողմից պարգևատրվել է մի շարք մեդալներով, երախտագիտության և գնահատանքի հավաստագրերով, որոնք են՝

1. «Երախտագիտության» մեդալ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից,
2. «Սուրբ Ներսես Շնորհալի» մեդալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից,
3. «Գնահատանքի և երախտագիտության» մեդալ՝ Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության կողմից,
4. «Գնահատանքի և երախտագիտության» մեդալ՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից,
5. «Էլիս այլընդ» պատվո մեդալ, որը հանդիսանալով ամերիկյան մրցանակ, ստեղծվել է Կազմակերպությունների ազգային կոալիցիայի (NECO) կողմից՝ հարգանքի տուրք մատուցելու այն ներգաղթյալին, որը աջակցություն է ցուցաբերել Ամերիկային և որի ֆինանսական միջոցներով օգնության ձեռք է մեկնվել ներգաղթյալներին և նրանց երեխաներին,
6. Գավառի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում,
7. Գավառի պետական համալսարանի պատվավոր բարերարի կոչում,
8. «Ներսիսյան ճեմարան» գնահատանքի մեդալ:

Իսկ 2016 թվականին, ծննդյան 80-ամյա հոբելյանի կապակցությամբ Ժիրայր Նիշանյանին Գավառի քաղաքապետի և համայնքի ավագանու որոշմամբ շնորհվելու է Գավառի պատվավոր քաղաքացու կոչում:

Ժիրայր Նիշանյանը ամուսնացած է, ունի երեք երեխա և հինգ թոռ:

BIOGRAPHY OF GSU HONORABLE BENEFACTOR JERAIR TAGVOR (ABRAHAM) NISHANIAN

GSU Honorable Benefactor Jerair Nishanian was born on November 29, 1936 in Tehran, Iran and completed his High School in Tehran (Alborz High School). Not being able to continue his education, he worked for two years in the mornings teaching Math to the sixth graders in local Elementary School, and in the afternoons, he worked as an office assistant for an Armenian merchant in the Bazar, and saved some money equivalent to \$500.00 US Dollars.

To fulfill his childhood cherished desire of becoming a Civil Engineer, he decided to continue his education in the United States of America. With the knowledge gained at the American Library in Tehran, Iran, he applied for admission to several universities in the United States, and was admitted to American University in Washington D.C. under a special program called “English Language for Foreign Students”. Then he also entered George Washington University in Washington D.C., and University of Nebraska in Lincoln to study Engineering. Although Jerair Nishanian’s older brother (Carro Nishanian) preferred him to go to Europe and become a Medical Doctor, after receiving a letter about entering the university he purchased an airplane ticket for his brother; and on November 8, 1958 Jerair Nishanian moved from Tehran to Washington D.C.

Upon arrival he immediately registered at the American University for a six-week course in English for foreign students, and upon completion of the course, because the tuition fees in George Washington University in Washington D.C. were too expensive, he decided to move to Lincoln, Nebraska, and register in the School of Civil Engineering at University of Nebraska. As his \$500.00 were spent very quickly, it was crucial for him to find a part time job to provide for his expenses. Unfortunately, in 1958, Lincoln was a small University town, surrounded with large farms, and did not offer many career opportunities to a foreign student. Therefore, after studying one semester, he decided to move back to Washington D.C. where he could work and continue his education. So he transferred his earned credits to the school of engineering at Howard University, a government supported university with lower tuition, and started working part-time as a busboy in a restaurant, a walking distance to his residence.

On January 22, 1965, Jerair Nishanian received his Bachelor of Science degree in Civil Engineering (BSCE), and by then at his part-time job he had advanced to Headwaiter position at International Inn Hotel, in Washington D.C.

Upon receiving his BSCE degree after a brief experience in highway construction and the aerospace industry, he obtained an Engineering position and resumed employment with the US Government, Department of Transportation as Highway Design, Bridge Design, and then as Structural Research Engineer. While working as Structural Research Engineer, Jerair Nishanian continued his education and in June 1969 he received his Master of Civil Engineering degree, and continued postgraduate studies in the Fatigue and Fracture Toughness Characteristics of Metals. Eventually, he became Project Manager for Research Activities of Federal Highway Administration concerned with the Fracture Toughness and

Fatigue Characteristics of Structural Steels used in highway bridges. Undertaking all these demanding jobs and at the same time always looking for better opportunities he continued his activities.

Being interested in the real-estate development, while working full time for Federal Government, Jerair Nishanian also worked part-time in the evenings and weekends in the private sector involved in design and construction of commercial and residential projects.

While in graduate school, in November 1969, he received five thousand dollars (\$5000.00) from his mother (Mariam Nishanian), and in partnership with a close friend, (Dr. Ara Pezeshkian), he established JAM Enterprises, and invested in couple of old residential real properties in Kensington, Maryland, which he deemed to have the potential of future commercial development. JAM Enterprises was his first venture which was successful, and it continues to this date. While working full time as an engineer, Jerair Nishanian continued his part-time entrepreneurial ventures, and in addition to JAM, he established NGN, JERAX and JADES Enterprises, and in November 1988, after 22 years of service in the Federal Government, he resigned from his position and concentrated full-time on his private personal endeavors.

As the Managing General Partner of his enterprises, Jerair Nishanian has developed and built shopping centers, office buildings, commercial and residential subdivisions which include: Commercial property occupied by Merchant Tiers on Chain Bridge Road, at Tysons Corner, VA; Office Building at 1880 Howard Ave, Tysons Corner, VA; JADES Shopping Center in Vienna, VA; JADES Offices in Vienna, VA; 720 Grant Street Center in Herndon, VA; Manassas Park Shopping Center in Manassas Park, VA; Brentwood Court Townhouses in Vienna, VA; and Akhtamar's Haven subdivision, an exclusive residential subdivision in Great Falls, VA.

Jerair Nishanian is the President and the founder of Jer-Tag Enterprises, Inc., (Jer-Tag), and Cycle Homes, Inc., (Cycle) Virginia corporations. Jer-Tag Enterprises, Inc. holds a Virginia real estate brokerage license, and Cycle Homes Inc. holds a Class A contractors' license.

Jerair Nishanian being semi-retired is not actively involved in day to day management of said partnerships and corporations, however, his son Tagvor G. Nishanian as his partner, fulfills the administrative responsibilities and his daughter, Alineh Nishanian Templin is in charge of the property management.

Jerair Nishanian's father (Abraham Nishanian) was born in Bursa, Turkey and his mother (Mariam Nishanian), in Apin Akoulis. They were the only members of their families who had survived the Armenian Genocide. His father was an entrepreneur, and had developed an export business of packaging and shipping Persian carpets to the USA. He was proud of his Armenian identity and his Armenian heritage and traditions. Jerair Nishanian's father passed away when he was only two years old. Jerair Nishanian the youngest of five children was raised by his mother. His mother, being a very young child, with a bullet in her knee miraculously had survived the Armenian Genocide, and was taken

to an orphanage established by Americans in the city of Hamedan in Iran. She was a very pious, wise and resourceful lady who raised all five children alone.

Upon completion of his undergraduate education and obtaining his permanent residency in the USA, he petitioned the US Eembassy in Tehran to issue a visitor's visa to his youngest sister (Hasmick) and his mother, (Mariam) and after their arrival he changed their visas to permanent residency status. In November 1967, he petitioned for his oldest sister, (Vartin Zarookian) and her family and thereafter, he petitioned for his other sister (Flora Gharakhanian) and brother (Carro Nishanian) and their families to be granted immigrant visas, and by mid nineteen-seventies his entire family had moved to the USA.

Jerair Nishanian has been deeply influenced by his parents' past, and developed strong feelings for his ancestral motherland, Armenia. He has always felt a sense of duty and deep desire to provide assistance to children who are in orphanages, and be helpful to underprivileged young Armenians, in particular, to those talented so they could achieve their potentials. To realize his vision, on November 30, 1993, he established "Jerair Nishanian Foundation", INC. "JNF" a charitable organization. The Corporation was incorporated under provisions of the Virginia Nonstock Corporation Act. "JNF" was formed exclusively for religious, charitable, scientific, testing for public safety, literary and educational purposes, all within the meaning of Section 501C(3) of the Internal Revenue Code of 1986.

In Washington 2002, Jerair Nishanian had a business meeting with the Head of RA National Assembly's Standing Committee on Education, Science and Youth, Hranush Hakobyan (now RA Minister of Diaspora) and the meeting was the occasion for the beginning of charitable projects in homeland.

In August 2003, Jerair Nishanian and his wife Anahid Nishanian, by the invitation of Hranush Hakobyan, visited their homeland, came to Gegharkunik region and became acquainted with social problems existing in the Region. Immediately after meeting the Rector Hrant Hakobyan and students of Gavar State University, they decided to contribute to the educational sphere. For the first year, they expressed willingness to financial contribution to 10 students from needy families and then the number of beneficiary students was multiplied.

Since then the Fund for Armenian Relief (Armenian branch) and Gavar State University jointly implement "[Jerair Nishanian Foundation Scholarship](#)" program.

In 2004 "Jerair Nishanian Foundation" provided financial resources needed to renovate the Academic Building of Humanities Faculty of Gavar State University.

All beneficiary students included in "[Jerair Nishanian Foundation Scholarship](#)" program also get monthly fellowship equal to 7,000 AMD.

Later on Mr. Nishanian also allocated funding for providing Internet connection in GSU.

In 2006 by the decision of GSU Academic Council, Mr. Jerair Nishanian was granted the title of Honorable Doctor of Gavar State University for his contribution to the University's scientific and educational development.

Since 2008-2009 academic year Mr. Jerair Nishanian increased the number of scholarships and additionally provided scholarship to GSU MA students.

Over the past years, due to “[Jerair Nishanian Foundation Scholarship](#)” program, hundreds of students got different degrees and work successfully in different spheres of economy contributing to the development of their homeland.

The “JNF” scholarship program in Armenia is managed by Diocesan affiliated Fund for Armenian Relief (FAR) in New York, NY, USA, and its branch office in Yerevan, Armenia.

In September 2011 when Mr. Jerair Nishanian and his wife, Mrs. Anahid Nishanian visited Gavar State University along with the Board members; Archbishop Aykazian, Reverend Yeretz Vrtanes Kalajian and Yeretzgin Anahid Kalayjian, the students of GSU faculties received them with great honour and Jerair Nishanian was granted the title of Honorable Benefactor by the decision of GSU Academic Council.

“JNF” was one of the six major donors of the events dedicated to the Centennial of the Armenian Genocide which took place in Washington D.C. in May 2015.

“JNF” has also funded several special projects:

1. Remodeling and construction of the Main Altar of Saint Mary Armenian Apostolic Church, Washington DC.;
2. Renovation of buildings in Gavar State University;
3. “JNF” sponsored and funded the translation and publication of the following books:
 - a. The translation of the book from Turkish into English authored by Dr. Tanner Akcam, titled “The Young Turks’ Crime Against Humanity” – The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire”.
 - b. The translation and publication of Dr. Tanner Akcam’s book into Eastern Armenian.
 - c. Printing of a children’s book titled “Yes Hay Em /I am an Armenian/” authored by Mrs. Anoush Nakashian.
 - d. The publication of a history textbook, “History of the Armenians in the Ottoman Empire” co authored by several Armenian scholars, to be used as a text book by the university students in Armenia.
 - e. The Dreams & Miracles published in Armenia and distributed among soldiers in Armenia.
 - f. The publication of a second textbook, “Contemporary History of Literature” summarizing the Turkish literature including Genocide materials.
 - g. The translation of the book from Turkish into English and also from Turkish into Armenian authored by Dr. Taner Akcam, titled “Forced Islamization of the Armenians.”

The “JNF” is being managed by its Board of Directors as follows:

Jerair Nishanian, President

Anahid Nishanian, Secretary

Tagvor G. Nishanian, Vice President/Treasurer

Members

Archbishop Vicken Aykazian
Reverend Vertanes Kalayjian, Archpriest
Vazrik Rick Nishanian
Yeretzgin Anahid Kalayjian
Alineh Nishanian Templin
Zaven Kalayjian

Jerair Nishanian is the recipient of several medals, certificates of recognition and gratitude from the RA President, Catholicos, Armenian universities and different organizations which include:

1. “Erakhtagitutyun Medal” (The Medal of Gratitude) from the President of Republic of Armenia.
2. “St. Nersess Shnorhali Medal” from His Holiness Karekin II, Catholicos of All Armenians.
3. Medal of Recognition and Gratitude from the Ministry of Diaspora of the Republic of Armenia.
4. Medal of Recognition and Gratitude from the Ministry of Education and Science of the Republic of Armenia.
5. “The Ellis Island Medal of Honor”, which is an American award founded by the National Coalition of Organizations (NECO), which pays homage to the immigrant, who has contributed to America and has helped by his heritage the immigrants and their children.
6. Title of Gavar State University Honorable Doctor.
7. Title of Gavar State University Honorable Benefactor.
